ISSN 1829-0469

ԵՐԱԺԻՇՏ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերից | #03 (135) մարտ 2017 | գինը՝ 100 դրամ

ՏՈՀՄԻԿ ԵՐԱԺԻՇՏԸ. «Երգող հոգի»

Կանադաբնակ ջութակահար Ռուբեն Կոսեմյանը տոհմիկ երաժիշտ է: Նրա ծնողները տարիներ շարունակ եղել են Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջատար ջութակահարներ: Հայրը ՀՀ վաստակավոր արտիստ, Երևանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի պրոֆեսոր Ալեքսանդր Կոսեմյանը, Կոմիտասի անվան քառյակի ալտահարն է: Ռուբենը ծնվել է Հայաստանում: Չորս տարեկանում ջութակ նվագել է սովորել հոր ղեկավարությամբ, կոնսերվատորիայում ուսանել է ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյանի դասարանում: Ինը տարեկանում այդ հրաշամանուկը կատարել է Մենդելսոնի և Մոցարտի ջութակի կոնցերտները նվագախմբի հետ: Նրա և պապի հետքերով քայլ առ քայլ դեպի Պառնաս է ընթանում Ռուբենի որդին՝ ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Դավիթ Կոսեմյանը:

Ռուբենը մասնակցել է Իգոր Օյստրախի, Տիբոր Վարգայի, Ռուբեն Սահակյանի, Ժան Տեր-Մերկերյանի, Իվան Մոնիգետիի և Դոմինիկ դե Վիլենկուրտի վարպետության դասերին: 1997-ին Ռուբենին շնորհվել է Վլադիմիր Սպիվակովի հեղինակավոր կրթաթոշակ:

1988-ին նա դասավանդել է ջութակ և կամերային անսամբլ Երևանի պետական կոնսերվատորիայում, իսկ 2000-ին ընտրվել է Քիչ կղզու երաժշտության և մշակույթի տան դասական երաժշտության բաժնի ղեկավար: Համերգներով հանդես է եկել Գերմանիայում, Ֆրանսիայում, Իրանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Մեքսիկայում, Թայվանում, Մալայզիայում, Ռուսաստանում և Վրաստանում, կատարել է Ա. Խաչատրյանի, Զ. Սարյանի, Պ. Չայկովսկու, Ա. Գլազունովի, Մ. Բրուխի, Յ. Բրամսի, Յ. Ս. Բախի, Է. Հայրապետյանի և այլ կոմպոզիտորների կոնցերտները:

2005-ին Ռուբեն Կոսեմյանը հիմնադրել է դաշնամուրային Տրիո:

2007 թ. հոկտեմբերի 31-ին նա արժանացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Արամ Խաչատրյանի հարյուրամյակ»ի Ոսկե հուշամեդալի՝ ՀՀ կոմպոզիտորների միության կողմից:

2009-ին Ռուբենը հրավիրվել է միանալու «Խաչատրյան» պետական քառյակին որպես առաջին ջութակ, որտեղ նա աշխատել է մինչև 2010 թ.: 2010-ից Ռուբենը բնակվում է Կանադայում. իր կանադական դեբյուտը նա կատարել է Sinfonia Toronto նվագախմբի հետ (դիրիժոր՝ Նուրիան Արման) «Գլենն Գուլդ ստուդիայում» և «Koerner Hall»ում:

Երևանի «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնի համերգասրահում տեղի ունեցավ Ռուբեն Կոսեմյանի համերգը դաշնակահարուհի Նատալյա Մնացականյանի ընկերակցությամբ: Այս շրջագայությունը և համերգը հովանավորել էր «Canada Council for the Arts» կազմակերպությունը:

Ի՜նչ լավ է, որ մեր ագրեսիվ ժամանակներում դեռ հանդիպում ենք արվեստագետների, ովքեր չեն մրցակցում, չեն տենչում գերազանցելու ոչ մեկին, այլ պարզապես փարվում են երաժշտությանը, իրենց հոգու տեսիլքների և պայծառացումների առատությունից բաժին են հասցնում նաև ունկնդիրներին:

Ռուբենը ռոմանտիկ հոգեկերտվածքով երաժիշտ է: Այս հանգամանքով էր նաև պայմանավորված համերգի «սոլ-մինորային» ծրագրի ընտրությունը (գերիշխող տոնայնությունն է): Այն բաղկացած էր բավական բարդ ստեղծագործություններից, որոնք ջութակահարն ու դաշնակահարը, կարելի է ասել, հեշտությամբ հաղթահարեցին:

Այստեղ չենք խոսի ջութակահարի հիանալի տեխնիկայի մասին՝ խրոխտ ստակկատո, ճախրող սպիկկատո, հզոր ակկորդներ, կայուն հնչյուն, մաքուր ինտոնացիա և այլն: Չէ՞ որ այս ամենը ծառայում է գեղարվեստական խնդիրներին, կերպարաստեղծությանը: Այս հարցում նա ևս հասել է բարձր մակարդակի. ոճի նուրբ զգացողություն, կերպարանափոխվելու ճկունություն և այլն: Եվ այս հատկանիշները վառ կերպով դրսևորվեցին հիշյալ համերգում:

Երեկոն բացվեց Կարեն Խաչատրյանի Ջութակի և դաշնամուրի սոլ-մինոր Սոնատով:

Ձևով դասական, բովանդակությամբ ռոմանտիկ այս եռամաս Սոնատում երաժիշտները հանդես եկան որպես զգայուն, «իրավահավասար» համագործակիցներ, որոնք միմյանց հասկանում են, ինչպես ասում են, կես խոսքից: (Համերգից հետո, մեր զրույցում, ջութակահարը խոստովանեց, որ ժամանակին նա Մոսկվայում այցելել է Կ. Խաչատրյանին, միասին լսել են Սոնատի Յաշա Հայֆեցի ձայնագրությունը, արծարծել տեմպերի, դինամիկայի և այլ կատարողական հարցեր: Ահա թե ինչու այդքան համոզիչ էր հնչում Սոնատի «հեղինակային» մեկնաբանությունը):

Կ. Խաչատրյանն ուսանել է Դ. Շոստակովիչի դասարանում, բարերար ազդեցություն է կրել նաև Ս. Պրոկոֆևից և Ա. Խաչատրյանից: Մեծ ֆիզիկոս Անրի Պուանկարեն ասում էր. *«Տարրերն ինքնին ոչինչ են, կարևորը նրանց միջև կապն է»:* Արվեստում տարրերը մեծ նշանակություն ունեն, բայց ավելի կարևոր են դրանց տրանսֆորմացիան, օրգանական միաձույլը: Մասնավորենք Կ. Խաչատրյանի Սոնատում նկատված ազդեցություններից մի քանիսը: 1-ին մասի գլխավոր թեման իր բնույթով հիշեցնում է Ս. Պրոկոֆևի ջութակի 2-րդ Կոնցերտի 1-ին թեման (ի դեպ, նույնպես սոլ-մինոր): Բացի այդ, Ս. Պրոկոֆևի ազդեցությունը զգացվում է նաև երկաթե ռիթմի մեջ, լայնաշունչ, անվերջանալի մեղեդիներում, որոնք ծավալվում են ջութակի գրեթե ամբողջ ծայնասահմանով: Սոնատի 1-ին մասի թիվ 6 հատվածում ջութակի և դաշնամուրի աջ ձեռքի նյութը նմանվում է Սեզար Ֆրանկի ջութակի Սոնատի ֆինալի կանոնիկ շարադրանքին: Նույնը զգացվում է նաև 2-րդ մասի թիվ 7-ի հատվածում: Սոնատի 2-րդ մասի թիվ 5 վալսանման դրվագն իր ազնիվ, անարատ բնույթով հիշեցնում է Ս. Պրոկոֆևի բալետում Ռոմեոյի և Ջուլիետի կերպարները, նրանց սիրառատ «երկխոսությունը», որը հրաշալի վերստեղծեցին Ա. Կոսեմյանը և Ն. Մնացականյանը: Սոնատի 3-րդ մասն սկսվում է շոստակովիչյան հեգնանքով համակված երաժշտությամբ: 3-րդ մասի թիվ 4-ում ակնհայտ է Ա. Խաչատրյանի ջութակի Կոնցերտի ազդեցությունը, նույնը և թիվ 16-ում: Ահա այս բոլոր տարրերն իր սրտի քուրայում օրգանապես միաձուլելով, գումարելով նաև իր ասելիքը՝ Կ. Խաչատրյանն ստեղծել է իր Սոնատը: Նշված աղբյուրները վկայում են, որ Կ. Խաչատրյանը հիշյալ կոմպոզիտորների «հոգևոր ընտանիքի» (Թ. Էլիոթ) արժանի անդամն է: Այս ամենը միևնույն ժամանակաշրջանի կոմպոզիտորների եղբայրության փոխկանչն է, որը Ռ. Կոսեմյանը փոքր-ինչ ընդգծելով, ասես երաժշտական չակերտներով, զգալ էր տալիս ունկնդիրներին: Նույն կերպ ջութակահարն ընդգծում էր Յան Սիբելիուսի արվեստի նրբերանգները Մարժան Մոզետիչի պիեսում (որին կանդրադառնանք ստորև):

Հատկանշական է, որ ծրագրի գործերից չորսը, կարելի է ասել, մարմնավորում են կանանց տարբեր կերպարներ, Մորիս Ռավելի «Գնչուհին», Կլոդ Դեբյուսիի «Վուշե մազերով աղջիկը», Կամիլ Սեն-Սանսի «Հավանեզը» (որը նշանակում է Հավանա քաղաքի բնակչուհի, նույնն է հաբաներա) և Պ. Չայկովսկու ջութակի Կոնցերտի «Կանցոնետան» (կրկին սոլ-մինոր): Թեպետ վերջինս որևէ հուշող վերնագիր չի կրում, սակայն, եթե հիշենք Ֆ. Շոպենի 2-րդ և Յ. Բրամսի 1-ին դաշնամուրային կոնցերտների 2-րդ մասերը, ապա սխալված չենք լինի, եթե նման կերպարներ, հույզեր նկատենք նաև «Կանցոնետայում»: Նրանում մեծ կարոտ կա, անցած-գնացած օրերի վերհուշ, հայրենի բնության պատկերներ, օրինակ՝ Ա. Կուինջիի «Ճերմակ կեչիների անտառը». այս ամենից անբաժան է սերը: Ակամա հիշում ես պարմանուհի Տատյանային Պուշկինի տված հետևյալ բնութագիրը *«Երկչոտ, ինչպես եղնիկ անտառի»:* Անշուշտ, սա շեղում չէ նյութից, քանզի այս տպավորությունները ներշնչվել են հենց Ռ. Կոսեմյանի նվագից: Իսկ սրա հակապատկերն է «Գնչուհին» կրքոտ և պոռթկուն, ինչպես Սեն-Սանսի հավանեզը: Եթե «Գնչուհին» զուգահեռն է Ժ. Բիզեի «Կարմենի», ապա վուշե մազերով աղջիկը անբիծ գեղջկուհին, նման է Կարմենի հակապատկեր հեզահամբույր Միքայելային: Այս չնաշխարհիկ գործերի շարքը համալրեցին Զորջ Գերշվինի «Պորգին և Բեսը» օպերայի հերոս Սպորտինգ-Լայֆի «մեֆիստոֆելյան քառյակների» հայտնի փոխադրությունը, որն իրականացրել է Յ. Հայֆեցը, և կանադացի ժամանակակից կոմպոզիտոր Մարժան Մոզետիչի «Երգող ոգի» երկը, որը լսում էինք առաջին անգամ: Ի դեպ, Մոզետիչի պիեսը, որն արտահայտում է հոգու բուռն հրճվանք և ճախրանք, Ռ. Կոսեմյանի նվագացանկում տեղ է գտել դեռ 2010-ից՝ հեղինակի առաջարկությամբ: Իսկ Արամ Խաչատրյանի «Պարը» վաղուց է թրծվել-բյուրեղացել, քանի որ Ռուբենն այն փայլուն կատարել էր ուսանողական տարիներին Ա. Խաչատրյանի անվ. հանրապետական մրցույթում և արժանացել դափնեկրի կոչման:

Ռուբեն Կոսեմյան

Դժվար է նախապատվություն տալ համերգում հնչած որևէ գործի կատարմանը, սակայն չենք կարող չառանձնացնել Հ. Վենյավսկու «Լեգենդի» սրտառուչ մեկնաբանությունը, որը հոգուս խորքում կապվեց Շոպենի 1-ին Բալլադի հետ (դարձյալ սոլ-մինոր), որտեղ կան և՛ սեր, և՛ կարոտ, և՛ հայրենյաց վաղեմի փառքի արձագանքներ:

Նշենք նաև Կ. Խաչատրյանի Սոնատի 1-ին մասը, որի պոռթկուն թեման պայքարի բովից դուրս է գալիս հոգնաբեկ և ծաղկի պես թառամում: Դեպի երկինք, դեպի իդեալը բարձրացող մեղեդին չի հասնում իր «երազանքին»: Նախավերջին «ֆա-դիեզ» ձգտող հնչյունը «չի կարողանում» լուծվել «սոլ» հիմնահնչյունի մեջ, այլ նվաղելով, հալվելով «ընկնում» է «ֆա» անկայուն հնչյունի գիրկը: Նմանապես հալվեցին նաև Իկարոսի մոմե թևերը, երբ նա մոտեցավ արևին, բայց, չհասնելով իր բաղձալի նպատակին, ընկավ ցած:

Ահա այսպիսի խոհեր ներշնչեց Ռ. Կոսեմյանն իր պատկերավոր ու ազդեցիկ նվագով:

Համերգի վերջում երաժիշտները նվագեցին Անտոնիո Բաձիրնի «Թզուկների պարը», որի կատարման համար պահանջվում են մեծ հմտություն և վիրտուոզություն:

Ունկնդիրն սրտաբաց լսեցին Ռ. Կոսեմյանի և Ն. Մնացականյանի բովանդակալից և բարձրարվեստ ելույթը:

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ,
դիրիժոր,
Երևանի Կոմիտասի անվ.
պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր